ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՄԻ ՎԱՎԵՐԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Պատմ. գիտ. թեկնածու Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Մեր պատմագրության մեջ հայտնի է ուշագրավ մի վավերագիր, որ կրում է պոլսահայ շրջանում 1860-ական թթ. ապստամբական շարժում նախապատրաստելու, այդ ուղղությամբ նույնիսկ կոնկրետ քայլերի դիմելու մտորումները և ձեռնարկումները փաստարկելու համար։ Դա Պ. Նորատունկյանի 1863 թ. հոկտեմբերի 21-ին Հռոմից գրված նամակն է, ինչպես ենթադրվում է՝ Մ. Խրիմյանին[1]։

Չանդրադառնալով այդ վավերագրի այլևայլ մեկնություններին, որ տեղ են գտել տարբեր աշխատություններում, այստեղ ուզում ենք ուշադրություն հրավիրել նրանում գործածվող մի արտահայտության վրա, որ մեր կարծիքով ճիշտ չի ընկալվել ու բացատրվել և շարունակում է հակառակ հետևությունների հանգեցնել։

Նամակի հեղինակ Պ. Նորատունկյանի մտահոգությունը հայ ժողովրդի ազատագրության խնդիրն է։ Այդ նպատակով որոշակի քայլեր ձեռնարկելուց և բանակցություններից հետո նա դիմում է «Հայր և Եղբայր» եկեղեցականին և շարադրում Հայաստանի ազատագրության իր ծրագիրը և անգամ թելադրում, թե ինչ է անհրաժեշտ անել առանց հապաղելու։

Խոսելով Ֆրանսիայի հովանավորության ներքո Լեհաստանի ազատագրության համար տարվող ընդհատակյա աշխատանքի մասին, նամակագիրն ասում է. «Պոլսեն բաժանվելես մեկ օր առաջ ձեզի հաղորդեցի «մայրաքաղաքիս մեջ Գաղղիո դրոշակին ներքև գաղտնի դավաճանություն մը ի գործ դրվիլն ի նպաստ Լեհաստանի հեղափոխության»։ Դավաճանաց առաջին հաջող բայլն եղավ երկու հազարի չափ այլևայլ ազգե մարդ զինելով Կովկաս խրկել Մանյան անուն նավապետին հրամանատարությանը ներքև, չերքեզաց օգնության համար»[2]։ *Այնուհետև նա խոսում է «դավաճանաց» երկրորդ նպատակի մասին, որը հանգում է Կովկասում «ընդհանուր հեղափոխություն» հարուցելու և այդպիսով Լեհաստանին աջակցելու խնդրին։ Ինչպես հայտնի է, Պ. Նորատունկյանը մերժել է այդ ծրագրին աջակցելու շուրջն արված առաջարկը. «Որոշեցինք բնավ երբեք դեռասանական պաշտոն մը չընդունել ներկայացվելիք ողբերգության մեջ»,— ընդգծում նա և վկայում, որ «այս կարծիքիս վրա էր նաև պ. Պեշիկթաշլյանը»։*

Այս ելակետով մոտենալով խնդրին, Նորատունկյանը «դավաճանություն» բառով է բնորոշում այն շարժումը, որի նպատակն էր աջակցել Լե-

---

1 *Նամակն առաջին անգամ հրատարակել է Գյուտ Աղանյանը «Դիվան հայոց պատմության» մատենաշարի ԺԳ հատորում (Թիֆլիս, 1915, էջ 55—58)։*

2 *«Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 55 (ընդգծումները մերն են—Մ. Հ.)։*

հաստանի ազատագրությանը, լեհական հեղափոխությանը, իսկ ընդհատակյա աշխատանք ծավալողներին համարում է «դավաճաններ»։ Սակայն ի՞նչ դավաճանություն նկատի ունի հեղինակը, ո՞ւմ է համարում դավաճաններ։ Ակընհայտ է, որ նրա խոսքը ոչ թե յուրայիններ կամ համախոհների դեմ ուղղված գործողության, սեփական ազգին կամ որդեգրած գաղափարներին ու նպատակին անհավատարիմ գտնվելու մասին է (ինչպես թելադրում է բառի բուն իմաստը), այլ իշխողների դեմ ուղղված շարժման և նրա մասնակիցների, այսինքն՝ Լեհաստանը ցարիզմի լծից ազատագրելու և այդ նպատակով երկրից դուրս ընդհատակյա կամ բացահայտ գործունեություն ծավալողների, ազատագրական շարժման կազմակերպիչների ու մասնակիցների մասին։ Տիրող դասակարգի և իշխանության բառապաշարում դա դավաճանություն էր, իսկ նրա մասնակիցները՝ դավաճաններ էին։ Պատմականորեն այդպես է կոչվել քաղաքական նպատակ հետապնդող որևէ գաղտնի գործողություն՝ ուղղված իշխողների դեմ։

Հիշենք, օրինակ, Էրզրումի ռուսական հյուպատոս, գեներալ-մայոր Ա. Դեննետի հաղորդումները Էրզրումի (Կարինի) «Պաշտպան հայրենյաց» ընդհատակյա կազմակերպության մասին։ Մամուլում և Դեննետի հեռագրերում ու զեկուցագրերում կազմակերպությունը բնորոշվել է իբրև «դավադրական», իսկ ընդհատակայինները կոչվել են «դավադիրներ» («դավադիրներն ունեցել են զինվորական կազմակերպություն»)։ Ինչպես մատնանշում է Ս. Ներսիսյանը և ակնհայտ է նրա հրապարակած վավերագրերից, դիվանագիտական զեկուցագրերում «հայկական գաղտնի ընկերություն», «հայկական հեղափոխական ընկերություն» արտահայտություններով բնորոշվել է Էրզրումի «Պաշտպան հայրենյացը», որին էլ միաժամանակ վերագրվել է «դավադրական» գործունեություն, իսկ նրա անդամները համարվել են «դավադիրներ» («заговор», «заговорщики»)[3]։ Նույն արտահայտությունները ու բնորոշումները բազմակի գործածություն են գտել նաև Ռ. Հովհաննիսյանի հրապարակած փաստաթղթերում՝ ռուսական դեսպանությունների զեկուցագրերում, որտեղ ևս հաղորդվում է Կարինի նույն ընդհատակյա կազմակերպության մասին[4]։

Հենց այդ իմաստով է «դավաճան» բառը գործածում Նորատունկյանը՝ անտեսելով նրա բացասական իմաստը և նկատի ունենալով քաղաքական, ազատագրական այն նպատակը, որ հետապնդում էին «դավաճանները»։ Դա ակնհայտ է դառնում նաև նամակի շարունակությունից։ Առաջարկելով գործունեություն ծավալել Հայաստանի ազատագրության համար և «ձեռք-ձեռքի տալով» խորտակել «Հայաստանի անգութ շղթաները», նա գտնում է, որ պետք է հասնել այն բանին, որ հայության մեջ ներթափանցի ֆրանսիական ոգին («գաղղիական կյանքն»), արթնանա «վաղեմի հայկական հայրենասիրությունը», «խորին քաղաքականության և ճարտար զինվորականության հանճարը»։ Այդ նպատակով հարկ է ստեղծել մասնաժողով, ընթացք տալ ազգային «արտաքին գործերին», նպատակ դարձնել «Հայաստանի շղթաները խորտակելը», ինչպես դա արել են «ուրիշ ազգերը»։

3 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 188—190, 473—479։

4 Տե՛ս Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 345—353։

Այդ «ուրիշ ազգերը»,— գրում է Նորատունկյանը,— «հետևյալ կերպովն հաղթանակեցին. երեք ճշմարիտ ազգասեր գլուխ գլխոտալով, դավանանանունն ընդունելով, ընկերներ ավելցնելով, իրենց քաղաքականությանը համեմատ գրություններ հրատարակելով, օտար ազգաց համակրությունը գրավելով, տերության հավանությունը ստանալով և այլն և այլն։ Տասը, քսան, վաթսուն տարիներ անդադար հաջորդաբար աշխատելով, առանց վհատության, խոհեմությամբ և ասանկով նպատակներուն հասան։ Եթե իրենց մեջեն այսպես անվախ անձնանվեր Հայրենակիցներ (որոնց անունները աշխարհիս մեջ անմահ մնացին) չելլեին, սկզբունք մը չընեին, ո՛վ այն ազգերուն իրենց ազատությունը պիտի պարգևեր»[5]։

Այսքան լայն է Նորատունկյանի առաջարկած ծրագիրը։ Ըստ էության դա ընդհատակյա աշխատանք ծավալելու նախագիծ էր, որի բարեհաջող իրագործումը որոշակի արդյունք կտար։ Այդ ծրագիրը ընդունելի և խելամիտ էր 1860-ական թթ. համար։

Պատմագիտական մի շարք ուսումնասիրությունների հեղինակներ (Ա. Հովհաննիսյան, Մ. Ներսիսյան, Հ. Ղազարյան), անդրադառնալով Պ. Նորատունկյանի նամակին և ազատագրական պայքարի նրա առաջադրած ծրագրին, գնահատել են այն ըստ արժանվույն։ Սակայն մեր կարծիքով այդ վավերագրի մեկնության ընթացքում թույլ է տրվել մի շեղում։

Հանգամանորեն քննելով Պ. Նորատունկյանի նամակը, Ա. Հովհաննիսյանը «դավաճանական» արտահայտությունը փոխարինել է արտաքուստ հոմանիշ բառով՝ «դավադրական» և վերը բերված քաղվածքի «դավաճան» գոյականը բացատրել «իմա՝ դավադիր»[6]։ Գրքի այդ և նախորդ էջերում մեկնաբանում են Նորատունկյանի նամակը և առաջ քաշած ծրագիրը՝ բնորոշվելով ոչ այլ կերպ, քան «դավադրական ծրագիր», «ազգային շարժման դավադրական» կամ «զինվորական-դավադրական» մեթոդ, իսկ նրա առաջադրողները՝ «դավադիրներ»։ Համապատասխանաբար էլ ազգային-ազատագրական այդ ծրագիրը բնութագրվում է այսպիսի արտահայտություններով՝ «Նորատունկյանը դավադրական իր ծրագիրը», «քաղաքական-դավադրական», «մասսաներից կտրված դավադրական աշխատանք» և այլն։

Նույն վավերագրում առաջադրված ծրագրի առթիվ Հ. Ղազարյանը քանիցս դիմել է «դավադիրների ծրագիր», «դավադրական ծրագրեր», «պայքարի դավադրական ձևեր» (կամ «փորձեր») արտահայտություններին, որոնցով նույնպես բնորոշում է Նորատունկյանի առաջարկությունները։ Ավելին. նա ընթերցողին առավել չափով հեռացնելով Նորատունկյանի ծրագրի բուն էությունից և խոսելով նրա գտած հնարավոր արձագանքների մասին, չակերտների մեջ է առնում «ապստամբություն» տերմինը և տեղնուտեղն էլ բացատրում՝ «իմա՝ դավադրություն», ինչպես և հակառակ իմաստով է գործածում իր իսկ արտահայտությունն ըստ խնդրո. «Այդ ծրագրերը «գործարար հողի» վրա դրվեցին 1870 թվականին միայն»[7]։

---

5 «Դիվան հայոց պատմության», էջ 57 (ընդգծումը մերն է—Մ. Հ.)։

6 Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, Երևան, 1955, էջ 561—562, տե՛ս նաև էջ 559—560։

7 Տե՛ս Հայկ Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 514—517 և 574։

Ուշադրություն չդարձնելով այն բանին, որ փոխառնված «դավադրական» և «դավադիրներ» տերմիններն իրենց այժմեական բացասական բովանդակությամբ ընթերցողին հակառակ պատկերացում են տալիս պատմական իրողության մասին, Հ. Ղազարյանը դրանք նույն իմաստներով էլ օգտագործել է անցյալ տարի լույս տեսած ռուսերեն իր աշխատությունում։ Նա լեհ գործիչներին համարում է «заговорщики», իսկ Նորատունկյանի ծրագրի հնարավոր հետևորդներին վերագրում է «заговорщические методы», կրկին չակերտների մեջ է առնում «восстание» տերմինը, ապա և նկատում. «Связанные с поляками армянские деятели, переняв заговорщические формы и методы борьбы, действовали в отрыве от народа...»[8].

Առանց խնդրի շուրջը ծավալվելու նույն կերպ է գնահատել Նորատունկյանի ծրագիրը նաև է. Կոստանդյանը՝ վերջերս լույս տեսած իր գրքում. «Սակայն նամակագիրը ժողովրդական լայն ելույթների փոխարեն առաջարկում էր նեղ դավադրական գործելակերպ»[9]։

Չխոսելով մի շարք այլ հրատարակություններում նույն վավերագրին տրված գրեթե նույնանման գնահատությունների մասին, նշենք, որ տերմինների ոչ ճիշտ գործածության հետևանքով, ինչպես և առաջադրվող ծրագրի բուն էության մեջ բավարար չափով խորամուխ չլինելու պատճառով աղավաղվել է ազգային-ազատագրական շարժում նախապատրաստելու և ապստամբական գործողությունների դիմելու ազգային-քաղաքական շատ ուշադրավ ծրագրի բովանդակությունը։ Նորատունկյանը բոլորովին էլ դավադրության դիմելու կոչ չէր անում և հայ գործիչներին դավաճանության չէր մղում։ Նա առաջարկում էր խորհել Հայաստանի դրության մասին, որոնել նրա շրջթանները թոթափելու ուղիներ, իր կողմից առաջ էր քաշում պատմականորեն արդարացված փորձն ընդօրինակելու լիապես առողջ գաղափար։ Ըստ նրա հարկ էր հենվել այդ փորձի վրա և համախմբել հայրենասերներին, ստեղծել փոքրաթիվ խումբ, ապա՝ խմբակներ, ժողովրդի մեջ երկարատև (10—60 տարի), «անդադար հաջորդաբար» աշխատանք ծավալել և «առանց վհատության» հասնել նպատակին։ Դա դավադրություն չէր, այլ ընդհատակյա աշխատանքի փորձով քննության դիմացած ուղեգիծ։ Նրան հետևողներն էլ բնավ դավաճաններ չէին, այլ անձնվեր գործիչներ, որոնք պատրաստ էին իրենց կյանքի գնով մարտնչել սեփական ժողովրդի ազատագրության ու փրկության համար։ Թրվում է հենց այսպես պետք է ընկալել ու մեկնաբանել Նորատունկյանի ծրագիրը, որը, ցավոք, պարարտ հող չգտավ, մնաց անարձագանք և շատ շուտով, հեղինակի մահվան հետ միասին, մոռացության տրվեց։

Վերջում նկատենք նաև, որ մարքսիստական գրականությունը, Մարքսի և Էնգելսի մի շարք աշխատությունները մեծապես օգնում են ճիշտ ըմբռնելու հեղափոխական շարժման մեջ, նրա նախասկզբնական փուլում, մինչև բանվորական-հեղափոխական կազմակերպված պայքարի սկզբնավորումը, այսպես կոչված, «заговорщик»-ների խաղացած բուն դերը։ 1852 թ. կեսերին գրախոսելով Ա. Շենյուի գիրքը, որ նվիրված է «դավադիրներին», գաղտնի կազմակերպություններին, ոստիկանության ձեռնարկումներին ու ազատ հրը-

---

8 Г. М. Казарян, Армянское общественно-политическое движение в 50—60-х годах XIX века и Россия, Ереван, 1979, էջ 205—207 և 294։

9 Տե՛ս Է. Ա. Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979, էջ 96։

ձիգներին, Մարքսը բավական մեծ տեղ է հատկացնում առաջինների գործունեությանը, ցույց է տալիս նրանց խաղացած իրական դերը՝ ապստամբական, ապա և հեղափոխական շարժման մեջ։ Մի փոքր ավելի ուշ՝ նույն թվականի սեպտեմբերին, Մարքսի գրած «Մաձինիի և Կոշուտի գործողությունները» հոդվածում (ինչպես և այլ գործերում) նույնպես շոշափվում է ապստամբություն-դավադրություն հարցը, նշվում է, որ Կոշուտը «դավադիրների» հետ որոշակի կապեր ուներ[10]։

Վ. Ի. Լենինը նույնպես խոսում է «դավադրության» մասին՝ տերմինի մեջ դնելով քաղաքական իմաստ։ Նա ուղղակի գրում է. «Նարոդովոլականի համար քաղաքական պայքարի հասկացությունը նույնական է քաղաքական դավադրության հասկացության հետ... Բլանկիզմի, դավադրականության ավանդույթները նարոդովոլականների մոտ սարսափելի ուժեղ են, այնքան ուժեղ, որ նրանք քաղաքական պայքարը չեն կարող պատկերացնել այլ կերպ, քան քաղաքական դավադրության ձևով»[11]։ Մի այլ առիթով ևս Վ. Ի. Լենինը արծարծում է «քաղաքական դավադրության» հասկացությունն ու գործելակերպը, ինչպես և պարզաբանում է «քաղաքական պայքար» հասկացության տարբեր ըմբռնումները տարբեր ժամանակներում։

«Քաղաքական դավադրության» վերոհիշյալ ըմբռնումից Նորատունկյանի «դավաճանություն» և նրան վերագրված «դավադրություն» հասկացությունը շատ է հեռու։ Իհարկե, ինքը՝ Նորատունկյանը ևս հեռու էր նարոդովոլականների շարժումից, բուն քաղաքական պայքարից։ Ազգային-ազատագրական պայքարի նրա ըմբռնման արմատը, սակայն, կարելի է տեսնել հունական, իտալական, լեհական այն ընդհատակյա շարժումների մեջ, որոնց նպատակն էր՝ հասնել իրենց ժողովրդի ազատագրությանը՝ անկախ իրենց ստացած անվանումներից, և նվաճել ազատությունը այն եղանակներով, որոնք նրանց համար ավելի մատչելի էին։

Այսպիսով, թվում է, մեր օրերում լույս տեսնող պատմագիտական երկերում անդրադառնալով հնօրյա վավերագրերին, հարկ է մեծ զգուշությամբ օգտվել նրանց տերմիններից, առավել ևս ճշգրտությամբ մեկնաբանել իմաստափոխություն ապրած արտահայտությունների բուն բովանդակությունը։ Այս առումով էլ, կարծում ենք, հարկ կա նոր մոտեցում հանդես բերել Նորատունկյանի առաջադրած ծրագրին, նորովի ընթերցել ու մեկնաբանել նրա նամակն ու մտքերը։

---

10 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 7, М., 1957, 268—307, т. 8, էջ 383, 478 և հտ.։

11 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 573—574 և հտ.։

К ТОЛКОВАНИЮ ОДНОГО ДОКУМЕНТА

Кандидат историч. наук М. Н. АКОПЯН

(Резюме)

В своем известном письме от 21 октября 1863 г. Г. Норатунйкян выдвигал широкий план деятельности с целью «сокрушить оковы Армении». Пользуясь официальной терминологией своего времени, предлагаемый план он назвал «заговором». В некоторых современных исследованиях это слово понято в буквальном смысле, а предполагаемая деятельность—как «заговорщицкие методы борьбы». Такое толкование не соответствует цели и духу документа; на самом деле в нем речь идет о подготовке к восстанию в Западной Армении.